ՇԱԲԱԹ 21 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1906 — ԹԻՒ 853

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համատարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 "
Արտասահմանի համար տարեկան 15 ֆր.
վեցամսեայ 8 «
Ամերիկայի համար տար. կան 3 տլ.
վեցամսեայ 1.50 «

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ:

Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ է

Նամակ եւ դրամ ուղղել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journa „Charjoum" Varna (Bulgarie)

Պուլկարիոյ համար ձեռքէ 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքէ 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

«ՏԱՍ ՏԱՐԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

Արդէն այս անունով բրօշիւրը յանձնուած է տպագրութեան:

Բրօշիւրի նպատակն է, առանց խծբծանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ դնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ՝ իմ պայքարը սկսուած է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց. Բնական է որ բրօշիւրի մէջ փաստող դօկիւմանները մեծ տեղ պիտի գրաւեն.

Բրօշիւրի գինը տպագրութենից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր.

Դիմել «Շարժում»ի Խմբագրութեան

Café Promenade Vienne

Այս շքեղ քաֆէն կը գտնուի Վիէննա Ֆրանց Ժօզէֆ քարափին վրայ. կըստանայ զանազան հայերէն թերթեր. Առհասարակ բոլոր հայ կամ արեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն. Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար դիւրութիւններ և անհրաժեշտ տեղեկութիւնները:

ՄԵՐ ՉԸ ՎՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Խմբագրութիւնս պատուիրեալ նամակներով յիշեցուցած է տասնեակ բաժանորդներու տարիներով ունեցած պարտքերնին և խնդրած է որ փութան մաքրել իրենց հաշիւը. Տակաւին շատերէն պատասխանը չստացանք. Պէտք է գիտնալ որ տարիներով թերթի պարտք ունենալը ամօթ է և մենք երբէք տրամադիր չենք ձրի թերթ ուղարկել բաժանորդներուն:

ՄԱՀՈՒ ՓՈՐՁ

ՀԵՌԱԳԻՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՖԻԼԻՊԷ 14 Հոկտ. 1906

ԱՅՍՕՐ ԽՈՒԼԻԳԱՆՆԵՐԸ ՅԱՐՁԱԿԵՑԱՆ ՎՐԱՍ ՎՏԱՆԳԱՒՈՐ, ԲԱՆ ՉԸԿԱՅ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ ՆԱՄԱԿՈՎ.

ՎԱՐԴՕ
Տնօրէն եւ Խմբագիր
ՇԱՐԺՈՒՄ լրագրի

Շատ պարզ ու պատկերայուցիչ է այս հեռագիրը: Ինչ որ մեզի համար անակնկալ մը չէր, կը յուսայինք բայց չէինք հաւատար:

Դուք կրնայիք մահացնել Վարդօն արդէն նա կռիւ յայտարարելէն իվեր ատոր կը դիմէր ճակատաբաց ու անվախ արհամարելով ձեր սպառնալիքները՝ թքնելով մակաբոյծ ու սիրող յեղափոխականներուդ երեսին.

Վարդօն չմեռաւ և կրնար մեռնիլ սակայն այդ չի նշանակեր թէ անոր սկսած գործն ալ կը մահանայ, —չէ՛... սխալ էք ձեր հաշիւներուն մէջ.

Վիճակը ձգուած է. Սիրող յեղափոխականներդ պէտք է մտարուիք ասպարէզէն. շանթաժը դադրի, ժողովրդեան փարայով ապրիլը և յեղափոխութիւնը խանութ շինելը ամօ՛թ համարուի.

«Զարկ բայց լսիր»—Նարթադէնը պէտք է քանդուի»:

ՈՃԻՐԻ ՓՈՐՁԻՑ ՅԵՏՈՅ

Մի անգամ ընդ միշտ վերջ տալու համար Ֆիլիպէում հաւաքուած դաշնակցական ձրիակերների շառլատանութիւններին ամենից յարմարը գտեցի գալ այստեղ ու ժողովրդի առջեւ ճակատ ճակատի գալով ինձ մեղադրող շառլատանների հետ պարզել իմ պայքարի և դրանց զրպարտութիւնների իրական պատճառները: Մի խօսքով ես առիթը տուի ինձ մեղադրողներին որ գան և Ֆիլիպէի հայ հասարակութեան առջեւ հաստատեն իմ կարծեցեալ յանցանքները և բոլորովին չէի կարծում թէ այդ արարածները այնքան յիմար կը լինեն որ վայրենի խուլիգաններին յատուկ մի քայլով ժողովրդի ու իմ ձեռքը անհերքելի փաստը կըտան թէ՝ Վարդօյին մեղադրողները վախենում են ժողովրդի առջեւ և Վարդօյի ներկայութեանը իրենց մեղադրանքները հաստատել.

Բայց բարեբախտաբար սխալվել եմ. այդ ապուշները փոխանակ իմ տուած առիթից օգտուելու, ոճիրի դիմեցին, ինձ լռեցնել տալու համար: Մի ապացոյց որ ինձ մեղադրողները ոճիրով են ուզում ազատվել իմ արդարացի և անհերքելի մեղադրանքներից:

Անկարող լինելով Ֆիլիպէի հայ հասարակութեան առջեւ հաստատել իրենց իմ մասին տարածած զրպարտութիւնները և ջրել իմ իրենց հասցէի ուղղած մեղադրանքները՝ պարոնները որոշում են դիմել ոճրագործութեան՝ ղեկավարութեամբ բժիշկ Եազմաճեանի, որին երկու տարի առաջ ամենաստոր անձն էին համարում իր ամուսնութեան ձեւի համար, և Յակոբ Պզտիկեանի. Ու ոճիրի փորձը տեղի է ունենում կեանքիս դէմ.

* * *

Պատմենք այդ ոճիրի մասին.

Գալիս եմ Ֆիլիպէ, տեսնվում եմ մի քանի դաշնակցականների հետ. ամենն էլ սիրով են հետս և ուրախ, որ անձամբ եկել իմ մասին եղած մեղադրանքներին ճակատ առ ճակատ պատասխանելու. Դաշնակցականների և ուրիշների սիրով տեսակցութիւնները կատաղեցնում են տեղական չէֆերին՝ ինձ դէմ բոյկոտ հըռչակողներին.

Ուրբաթ երեկոյեան երեք դաշնակցականների, երկու ուսուցիչների և մի Հնչակեանի հետ նստած ենք Տրգովսկի հիւրանոցի կաֆէում և խօսում ենք դատախօսութեան հրաւիրագիրը կազմելու մասին, ուր և շեշտվում է իմ մասին եղած մեղադրանքները. Ինձ հետ գտնվողները նկատում են մեզնից բաւական հեռու նստած Յակոբ Պզտիկեանին և կասկածի մէջ ընկնելով Օթէլի բակը գնում ու հասկանում որ դաւադրութիւն կայ. որովհետեւ դաշնակցական՝ կռւի ընդունակ տղաներ դաւազաններով օթէլի չորս կողմը պաշարել են. Վերջը նկատում են որ Եազմաճեանն էլ մի քանի անգամ գալիս և տղաքների ականջին փսփսում է. Դաւադրութեան պատրաստութիւնը հասկանալուց յետոյ՝ ինձ ընկերակցողներն էլ պատրաստվում են դիմադրութեան. Պաշարողները զգալով որ կռիւը լայն ծաւալ պէտք է ստանայ և շատ մարդ կարող է մեռնել, յետաձգում են.

Շաբաթ առաւօտը, ժամի 11 ին ես մենակ, ձեռքերս պալտօյիս գրպանը դրած գնում եմ Թամիրխանցի մօտ, առաջարկելու որ նա ինձ մեղադրողներին յայտնէ՝ որ փոխանակ խուլիգանական և Դաշնակցութիւնը արատաւորող միջոցների դիմելու, գան և ժողովրդի առջեւ հաստատեն իրենց ամբաստանութիւնները և հերքեն իմ պայքարի պատճառների գոյութիւնը:

Գնում եմ հանգիստ, որովհետեւ չեմ կարծում թէ քաջ հըռչակված դաշնակցականները հինգ մարդով և ետեւից յանկարծակի վրաս կը յարձակվեն, արատաւորելով իրենց յեղափոխական կտրիճութիւնը. Բայց կրկին սխալվել եմ.

Բանից դուրս է գալիս որ Ֆիլիպէի չէֆերը այնքան վախեցել են ինձնից, որ հինգ մարդ են

զրկել պատուիրելով ետեւից և յանկարծակի յարձակվելու... չը գիտէի թէ այդչափ վախ եմ ազդել... Մեծ փողոցով անցնելիս, դիմացի գրոտուարով հայիւ փոստայի առաջ հասած՝ յանկարծ ետեւիցս գլխիս և ուսերիս մի քանի զուգնթաց երկաթեայ գաւազանի հարուածներ են իջնում ակնթարթային արագութեամբ կրկնվելով։ Գլխիս չորս կողմերից անմիջապէս արիւնը աչքերս են լցվում, ես ընկնում եմ տրոտուարի կողքին և աշխատում գլուխս պաշտպանել մահակների հարուածների ազդեցութիւնից։ Վերջապէս կարողանում եմ ձեռքներից ճողոպրել և մտնել մի հայ խանութ, այնտեղ աշխատում եմ ատրճանակս հանել գրպանիցս, մի զօրաւոր հարուած իջնում է աչքիս վերը ճակատիցս մի քիչ բարձր և գրպանս պատռելով ատրճանակս փախցնում են. վերջապէս ոստիկան է գալիս, ինձ տանում են, ճամբին նկատում եմ, ոճիրի նախագահին ինձ լրտեսող Յակոբ Պզտիկեանին և մօտենալով յայտնում որ ինքը դաւադիրներից է։ Ոճիրը բաւ չէ. ոճրագործների ընկերները, հաւաքված պուլկար ամբոխի զայրոյթը չեզոքացնելու համար, ստորանում են տարածելու որ՝ Թուրք Լրտես են սպանում։

Վերջապէս ինձ տանում են մօտակայ դեղարանը այնտեղից հիւանդանոց վէրքերս կապելու. ուր և հասկանում եմ թէ գլուխս վիրաւորված է չորս տեղից, որոնցմէ մին վտանգաւոր կարող է լինել եթէ ջերմ գայ։

Բարեբախտաբար նոյն երեկոյին սենեակումս ոտքի վրա եմ՝ կարող՝ այցելու բարեկամներիս հետ տեսնվելու։ Այժմ արդէն վտանգը բոլորովին անցած է համարվում։

Անգիտակից և վատ չէֆերի ձեռքում գործիք դարձած ոճրագործները առաջիններին ջանքերով երաշխաւորութեամբ ազատ են արձակված։

Ահա սա է անաեզր և անհիմն ոճրագործութեան պատմութիւնը, որ դաշնակցական պատմութեան ամենաարատաւորիչ էջերից մին պիտի կազմէ և փաստ է թէ իրօք դաշնակցութեան որոշ տարրեր այնքան ստորնացել են որ ամենայն լրբութեամբ կարող են մարդ սպանել, միայն իրենց վնասակար գոյութիւնը յարատեւելու համար։

Ի հարկէ ես ամէն ճիգ կը թափեմ այս ոճրի հաշիւը մաքրել Ֆիլիպեի չէֆերի հետ, հէնց պուլկար դատարանի միջոցով։ Եւ ես մեղաւոր չեմ լինի, եթէ Դաշնակցութեան մէջ տիրապետող աչքկապութիւնները կը բացվեն բուլղար արդարադատութեան ու ժողովրդի առջեւ։ Այս մտքից կը հրաժարվեմ միայն մի պայմանով. այն է որ Ֆիլիպեի չէֆերը՝ Դաշնակցութեան կողմից պատժվեն խստիւ և հրապարակով։

Ոճիրի փորձը ի հարկէ ինձ չի կասեցնել իմ սկսած պայքարից։ Պայքարը պէտք է շարունակվի, որովհետեւ ժողովրդի շահը այդ է պահանջում, իսկ իմ կեանքս նուիրված է ժողովրդին դեռ շատ վաղուց։

ՎԱՐԴՕ

15 հոկ. 1906 Ֆիլիպէ

ՆԱՄԱԿ ԹԱՒՐԻԶԷՆ

Դաշնակցական պառակտումներ Կովկասում եւ Պարսկաստանում։ —Դաշնակցական խմբապետների վայրագութիւնները Երեւանում եւ Մաղարայում. —Ոճրագործ Զուլումաթը կը փախչի Թաւրիզից. —Յայտնի դաշնակցական մը կը ԹՐԹՆԱՑ. Սալմաստի վիճակը։

——

Կովկասից մեզ հասած տեղեկութիւններից երեւում է որ ներկայումս Դաշնակցութիւնը պառակտուելու վրայ է, բաժանումը անխուսափելի եւ հրամայական է դառել։ Կովկասի զանազան քաղաքներում ժողովներ են տեղի ունենում. դաշնակցական չէֆերը խիստ անհանգստութեան մէջ են, նրանց վախը օրէ օր սաստկանում է, շնորհիւ գիտակից դաշնակցականների, որոնք հետզհետէ հեռանում են դաշնակցութիւնից։

Շնորհիւ ռուսական յեղափոխութեան, դաշնակցականների մէջ երեւան է եկել աւելի գէմոկրատ տարրեր, որոնք այսպէս թէ այնպէս այլեւս անկարող են համակերպուել եւ մնալ այն խմբակցութեան մէջ, որը ոչ որոշ նկարագիր ունի եւ ոչ էլ նպատակայարմար մի տակտիկայ։ Գիտակից տարրերը հետզհետէ հեռանալով առանձին կազմակերպութիւն են կազմում, եւ միշտ աշխատում են ցոյց տալ այն քաոսը, որ տիրում է բիւրոկրատ դաշնակցութեան մէջ։

—Մեր ասածներին համոզուելու համար կը թելադրենք ընթերցողներին կարդալ Մրաւեանի «պէտք է սթափուել» գրքոյկը որը հրատարակել են մի խումբ դաշնակցականներ, դա մի անկեղծ խոստովանութիւն է հէնց մի դաշնակցականի բերանով, այդ խոստովանութիւնը ինքն ըստ ինքեան մի պերճախօս ապացոյց է թէ ի՞նչպիսի խառնափնթորութիւն եւ կամայականութիւն է ստեղծել դաշնակցութեան մէջ։

Թաւրիզի դաշնակցականներն էլ չուզեցին անտարբեր հանդիսանալ այն փրկարար հոսանքի առաջ, որ յառաջ է եկել ամէն տեղ դաշնակցութեան մէջ. Չնայելով որ Թաւրիզի դաշնակցականների մէջ շատ քիչ են գիտակիցներ, այնուամենայնիւ նրանց մէջ էլ երեւան են եկել գէմօկրատները, որոնք ուզում են միանալ հեռացած դաշնակցականների հետ։

Յաճախ ժողովներ են տեղի ունենում, ժողովներում խօսակցութեան եւ վիճաբանութեան գլխաւոր նիւթը Տաճկաստանում գործել չը գործելու հարցն է։ Գիտակից դաշնակցականները արդէն հեռացել են, կազմի մէջ մնում է միայն խուժանը իր կոպիտ խուժանապետներով, հաստապարանոց աղաներ, որոնք մտել են այդ կազմի մէջ միմիայն իրենց անձնական շահերը պաշտպանելու։ Սրանք ի հարկէ չեն ցանկանում որ դաշնակցութեան կազմը բարեփոխուի, հասկնալի է թէ ինչո՞ւ։

Երեւանից մեզ գրում են.

«Այժմ այս կողմի դաշնակցականների մէջ սաստիկ երկպառակութիւն է ընկել. զինուորներ չեն հնազանդում իրենց չէֆերին, ամեն օր խումբ խումբ զինուորներ զէնքերը նետելով հեռանում են։ Խմբապետները եւ կօմիտէի անդամները շատ վատ դրութեան մէջ են. իրենց բոլորովին կորցրել են. չգիտեն ի՞նչ անեն, նոր բանք գերմարդկային ճիգեր են թափում, որպէսզի կարողանան ՝ըմբոստներին՝ մի կերպ խելքի բերել, սակայն չեն յաջողում. ամբողջ Երեւանեան նահանգում դաշնակցականները աննախանձելի դրութեան են մատնել. ժողովուրդն էլ կատաղելապէս երես է դարձրել եւ ամէն քայլափոխում արհամարհում է իր հարստահարիչներին։

"Հնչակեանները շնորհիւ իրենց խելացիութեան եւ համեստ վարմունքի, ամբողջ Երեւանեան նահանգը իրենց ձեռքն են առել. ժողովրդի համակրութիւնը եւ յոյսը Հնչակեաններին վրայ է։

«Մի քանի օր առաջ Գ. գիւղում տեղի է ունենում հետեւեալ տգեղ երեւոյթը. որը մի պերճախօս ապացոյց է հաստատելու համար, թէ ի՞նչ պիսի բռնապետական սիստեմ է տիրում դաշնակցական կազմակերպութեան մէջ։

«Գ. գիւղի դաշնակցական խմբապետը հրամայում է իր զինուորներին գնալ Մ.ի տունը եւ պահանջել նրանից մի ոչխար, հաւ, իւղ եւայլն, յայտնելով, որ այս երեկոյ իր մօտ պիտի գան մօտակայ գիւղերի խմբապետներն ու ենթակօմիտէի անդամները։

ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԱԶ

ՆՈՒԷՐ ԱՆՁՆՈՒԷՐ ՀԱՅԴՈՒԿՆԵՐԻՆ

Ա.

Անդրանիկի կոչն էր, որ կարդացի գիշերս «Շարժում»ի թիւ 848 եւ խոր մտորումների մէջ ընկած պառկեցի քնելու, բայց քունը հեռու էր փախել աչքերիցս. շարունակ մտածում էի. մերթ հնչում էր ականջիս Անդրանիկի զայրոյթն եղբայրասպանութեան դէմ, մերթ նորա աղերս և մերթ հպարտ կրծքից դուրս բղխած ազնիւ կոչը զինուորներին դէպի գործ.

«... Ամենը այն է որ՝ հայը սկսած է իր եղբայր հայ սպանել», զայրանում է Անդրանիկը. զայրացի՛ր, դա ազնիւ սրտի արդար բողոքն է. լսուած էր որ՝ «հօմօ հօմինի լուբուզ» (մարդը մարդու համար գայլ). բայց երբէք չէր լսուած՝ „Ֆրադըր Ֆրադրի լուբուզ» (եղբայր եղբօր համար գայլ)։

Անդրանիկը աղերսում է՝ «Թողուցէք անձնական ինչ կիրք որ ունիք... արդէն արիւնաքամ ըրած են հայ Հայաստանի մէջ». Իզո՛ւր են աղերսներդ քանի որ Դաշնակցութեան մէջ գոյութիւն ունին փառասէր եւ ցուցամոլ մարդիկ, որոնք աշխատում են մէկի պատիւը վայր ձգել, միւսին սրախողող անել և իւրեանց փառասիրութեան պատուանդանը իրենց հակառակորդների դիակի վրայ հիմնել. Իզո՛ւր են աղերսներդ, քանի որ դաշնակցութեան պարագլուխներն ամէն կերպ աշխատում են, եթէ ոչ ամբողջապէս, գոնեա, գլխով բարձր լինել հասարակ մահականացուներից։ Ազնիւ զինուոր, դու կարծում ես թէ՝ բոլորն էլ ունի՛ն քո ազնիւ զգացում և դու կարծում ես թէ՝ բոլորն էլ այնպէ՛ս են նուիրուած Հայրենիքին արդար գաղափարին, ինչպէս որ դու. ո՛չ շատերը նոցանից ցուցամոլներ են, որոնք վախում են նոյն իսկ իրենց ստուերից։

Այնուհետեւ ինձ երկար զբաղեցրեց նաեւ նորա խրոխտ կոչը՝ «...իմ կոչս է բոլոր յեղափոխական ընկերներուս, բոլոր հայ ժողովրդին—կուսակցական ինչ դաւանանքի ալ պատկանին—ժամանակ է որ սթափուինք, սեղմենք մեր շարքերը...։

Այո՛, «կուսակցական ինչ դաւանանքի ալ պատկանի», միայն թէ՝ «սեղմենք մեր շարքերը»...։

Ո՜հ, որքան հրաշալի բան կլինէր, մոռացած կուսակցական կրքոտ հաշիւներ, շարքերը սեղմած, ձեռք ձեռքի տուած ընթանալիս ընդդէմ հանուր թշնամուն եւ հայ կտրիճ զինուորն երգէր՝ «Տուր ձեռքդ եղբայր». չէ՛ որ այն ժամանակ աւելի դիւրին կլինէր «փրկութիւն»։

Բայց ի՞նչ. այս քաղցր մտորումներից յետոյ աչքիս առաջ պատկերացաւ դառն իրականութիւնը, ահա՛, «Մշեցին կը սպանէ Պոլսեցուն. Պոլսեցին՝ Մշեցին. Վանեցին իր համաքաղաքացին, Հնչակեանը՝ Դաշնակցականը և Դաշնակցականը՝ Հնչակեանը», և խաւար սենեակիս պատերը ձայն տուին չորս կողմից «ինչո՞ւ". դա Անդրանիկ շուարած «ինչո՞ւ»ն էր, որին ես չ'կարողացայ պատասխանել, չ'նայած որ երկար մտածեցի. դա մի կնճռոտ «ինչո՞ւ»ն է, որին շատերը նոյն իսկ կ'շուարին պատասխանել։ Մտքիս մէջ շարունակ կրկնում էի՝ «ի՞նչու. ինչո՞ւ...», ուղեղս թմրել էր այդ „ինչո՞ւ"ից եւ ես քնել էի։

Բ.

Ահա Զէյթունի անառիկ լեռները, առաւօտեան արշալոյսը խաղում է նորա կատարների հետ և ես մին–մինակ կանգնած նորա բարձունքների վրայ դիտում եմ նորա զառիվայրները։ Ազատ արծիւներ սլանում են գլխիցս վերեւ եւ իրենց ազատ երգեր հնչեցնում ու կարծես ծաղր ու աւելծքով են առաւօտեան ողջոյն ուղարկում բռնակալներին։

Ո՞ւր են քաջերը. ինչո՞ւ չեն գալիս, չէ՛ որ նոքա էլ ազատութեան ջերմ բարեկամներն են և ես սպասում եմ անհամբեր։

Բայց, ահա՛, ձիաների ոտերի դոփիւնը հեռուից դաշտավայրից գալիս

«Զինուորները գնալով Մ.ի մօտ մերժում են ստանում, Մը յայտնում է, որ ինքը անկարող է առայժմ խմբապետի հրամանը կատարել։

«Խմբապետ» զայրանալով յանդուգն Մ.ի տուած պատասխանի վրայ, հրամայում է որ ծեծելով իւր մօտ բերեն։ «Կարիճ» զինուորները մի ակնթարթում թափում են Մ.ի տանը. չորս կողմից շրջապատելով, որպէս մի յայտնի աւազակի, թակելով, գլուխը ոտները ջարգելով տանում ներկայացնում են իրենց շէֆին։ Խմբապետը իր ձեռքի հաստ մահակով նրա կողերը ջարդելուց յետոյ հրամայում է նրան իտնաւ բանտը նետել. այնքան ժամանակ երբ կը կատարի իր պահանջը։

«Խեղճ գիւղացին անա. երեք ամբողջ օր է մութ բանտում տանջւում է, նրա բարեկամների օրատաժորմոք աղաղակները չեն կարողանում անգութ խմբապետի վրայ ազդել եւ նրան յետ կանչել իր վճռից...»

Սա արդէն կամայականութեան ամենածայրայեղ աստիճանն է. այսպիսի դեպքեր մենք միայն կարող ենք տեսնել ամենավայրենի եւ անկիրթ երկրներում բռնակալների շրջաններում։

Մարաղայի դաշնակցութեան ներկայացուցիչը ծեծում է դաշնակցական մի զուիթիքիչի (արկղ չինող), որ համարձակութիւն է ունեցել Հնչակեան վաճառականի արկղները առոջ պատրաստել իսկ դաշնակցականինը յետոյ, խեղճ մարդու մարմինը ամբողջապէս ջարդուած է։

Ղազվինից մեզ հաղորդում են որ «կովկասեան մամուլում դաշնակցութեան մասին եղած մերկացումները մեծ ազդեցութիւն են արել այստեղ գտնուող դաշնակցականների վրայ։ Նրանք այժմ համոզւում են, որ իրենք չարաչար սխալուած են եղել դաշնակցութեան համար լաւ կարծիք ունենալով։

Դրա համար մի քանի հոգի միանալով բողոքում են Գիլանի կոմիտէին, յայտնելով որ իրենք կը հրաժարին, եթէ դաշնակցութիւնը չը կերպարանափոխի եւ նրա միջից մութ ուժերը եւ ձրիակերները դուրս չգան։ Գիլանի կոմիտէն այդտեղ է ուղարկում իր երկու ընկերներին, պատուիրելով ամենակտրուկ միջոցներ ձեռք առնել բողոքողներին զսպելու, հակառակ դէպքում նրանց ամենախիստ պատիժների ենթարկելու։

Կոմիտէի լիազօրները Ղազվին հասնելով սկսում են իրենց անելիքը, սակայն հէնց առաջին քայլափոխում վտանգաւոր խաչնդտների հանդիպեցան. բողոքողները նրանց մի լաւ ծեծելով ճանապարհ գցեցին դէպի Ռաշտ։

Մի քանի օրից յետոյ կոմիտէի կողմից եկաւ ոճրագործ Զուլումաթը այդ վատը հասնելուն պէս սկսեց իր սովորական սպառնալիքները, սակայն սա էլ ոչ մի յաջողութիւն չը գտաւ. բողոք ներկայացնողները ամուր են կանգնած իրենց որոշման մէջ. ոչնչով չեն ուզում զիջել, դաշնակցական չէֆերի սպառնալիքները նրանց համար ոչ մի նշանակութիւն չեն ունենում»։

Թաւրիզից Սալմաստ ճանապարհորդեց «կարմիր» Պետրոսի հաւատարիմ թիկնապահ՝ ոճրագործ Զուլումաթը։

Նրա «արքայական» կառքը շրջապատուած էր դաշնակցական «ընկերներով». նրա հետ միասին ուղեկցում էին երկու հրացանակիր «քաջ» դաշնակցականներ, որոնցմէ մին Վերէժի կեդրոնական կոմիտէի նախագահն էր։

Ոճրագործի շորերը եւ գլխարկը փոխել էին, որպէս զի չը ճանչցուի։

Գնացքը փառաւոր եւ ապահով ընթանալու համար կոմիտէի հարուստ գանձարանից ոչինչ խնայած չէր...

Ահա թէ ո՞ւր են գնում «ինքնապաշտպանութեան» եւ երկրի կուսակցութեան անունով հաւաքուած գրամները։

Ամբողջ 4 ամիս է, որ այս ոճրագործները թափառական հրէայի եւ մահուան դատապարտուած աւազակի նման մի կողմից միւս կողմն են փախչում։

Վերջերս Թաւրիզում թուրքացաւ դաշնակցական յայտնի զինուոր Մուկուզը (Մկրտիչ)

Թէ ի՞նչ է պատճառը նրա թրքանալուն, հաստատ ոչինչ չենք կարող ասել. մի քանի հոգի իրանից հարցրել են պատճառը, նա պատասխանել է այսպէս "որովհետեւ ինձ ուզում էին սպանել, ստիպուած եղայ այս միջոցին դիմելու, որպէսզի կարողանայի գոնէ կեանքս փրկել»։

Իսկ դաշնակցականները հաւատացնում են, որ իրենք են նրան ստիպել թրքանալու, մի շատ վսեմ գործ ինկատի ունենալով, մի գործ որից պիտի օգտուեն ամբողջ պարսկահայերը, այդ գաղտնիքը մինչեւ օրս դեռ ոչ ոքի չեն յայտնել։

Ասում են Մամատ աղա Մուկուզը դաշնակցականի յատուկ ճարպիկութիւնամբ ու խորամանկութեամբ կարճ ժամանակում կարողացել է ազդել իմամ-գումայի վրայ, նրան գրաւել որպէսզի իմամ-գումման շնորհ ունենայ դէպի թիւրքացած դաշնակցականները.. (երեւի դեռ շատերը պիտի թուրքանան)։

Երկու շաբաթ առաջ դաշնակցական սեւ հարիւրակները Սալմասի Վաւրա գիւղում սպանում են Սմբատ անունով մի հարուստ գիւղացու։

Դաշնակցական բաշիբոզուկները խաբէութեամբ նրան իր տանից հանում են եւ տանելով Սաւրա, 7-8 հոգով յարձակւում են վրան եւ կըտոր կտոր անում. գլուխը մարմնից բաժանում են, իսկ վերջն էլ յոչոտած դիակը շների առաջը գցում։

Այդ օրանից Սալմաստ ներկայացնում է կատարեալ դժոխք. ստեղծուել է մի անտանելի դրութիւն, որի մէջ տապակւում են խեղճ գիւղացիք։

Կառավարութիւնը սպանողներին ձերբակալելու պատրուակով ամբողջ գիւղերը լցրել է ձիաւորներով եւ մաուզերներով, որոնք իրենց ազատ զգալով ամէն կերպ ժողովրդին կեղեքում եւ հարստահարում են։

Մինչեւ հիմա 6-7 հարիւր թուման տուգանք է առնուած Սաւրայից, Մահլամից, Փայաջուկից եւ Ղայասայից։

Ամէն օր նորանոր ցաւալի եւ ցընցող լուրեր են ստացում այսինչին ձերբակալեցին, այնինչին բանտարկեցին. այսինչ տեղը չրջապատեցին, այսչափ տուգանք առին եւ այլն. մի խօսքով ամբողջ Սալմասը ներկայացնում է արեան ու կրակի մի թատերաբեմ։

Եւ դեռ ասողներ կան թէ Վարանցով Դաշկովական դաշնակցութիւնը թափում, աջ կողմն առաջ է ընթանում։

Ես զմայլում եմ, ես յափշտակւում եմ, որքա՜ն լաւ բան է «միաբանութիւն», ես յիշում եմ ցախաւելի պատմութիւնը, երբ հայրը մահուան անկողնում կանչում է իւր որդիներին եւ առաջարկում է նոցա ցախաւել, որպէսզի կոտրին, բայց ո՛չ մէկ չէ կարողանում կոտրել ցախաւելը։ Այնուհետեւ հայրը հրամայում է որդւոց, որ քանդին այդ ցախաւելը եւ նորա ծաղիկները առանձին առանձին կոտրին. որդիքը ծիծաղում են եւ ծաղրելով մէկ մէկ կոտրում. հայրն ասում է՝ «տեսնո՞ւմ էք. որդիք, եթէ այդ ցախաւելի նման միշտ համախմբուած լինէք, ձեզ ոչինչ չէ կարող թշնամին անել. իսկ եթէ բաժան լինէք եւ շարունակ կռուէք ձեզ ամէն կերպ կտրող է թշնամին վնասել։

Կռիւը երկար է տեւում, համարեա՝ մութն է, որ վերջին դռոհ են տալիս հայ քաջերը գոռալով՝ «Ղե՛րք. հետեւից, թշնամին փախաւ, կեցցէ՛ միմեանց սիրոյ ողջոյններ տալիս եւ համբուրում են, երկու կողմից զինուորները աղաղակում են՝ «կեցցէ՛ միութիւն»։ Ես հրացած նայում եմ նոցա, կպել իմ ժայռին եւ լաւ դիտում նոցա ամեն մի շարժում։

«Ղե՛րք, դիրքերդ», գոռացին խմբապետները եւ չտապեցին իրենց տեղը. ես չուարած դիտեցի շուրջս. մի՞թէ՞ թշնամին դարան էր մտել. ո՛չ այդ տաճկական քայլերգի ձայնն էր որ սթափեցրեց մեր խմբապետներին եւ չտապեցին իրենց տեղերը։ Գալիս է զօրքը խուժանի հետ եւ չրջապատում են հերոսներին։

— «Կրա՜կ», գոռում են խմբապետները եւ միահամուռ թնդիւնը հրացանների ղղրդացնում է ձորեր, քարայրներ. ես սարսափիցս կպչում եմ ժայռին. սկսում է զարհուրելի կռիւ. Դաշնակ եւ Հնչակ ձեռք ձեռքի տուած կռուում են յուսահատ զարկերի ընդմիջումների միջից լսում եմ խմբապետների ոգեւորեցուցիչ բառերը՝ «Ձախ կողմից կրա՜կ, տղերք, աջ կողմն առա՜ջ». եւ ձախ կողմը կրակ է թափում, աջ կողմն առաջ է ընթանում։

Ես զմայլում եմ, ես յափշտակւում եմ, որքա՜ն լաւ բան է «միաբանութիւն», ես յիշում եմ ցախաւելի պատմութիւնը, երբ հայրը մահուան անկողնում կանչում է իւր որդիներին եւ առաջարկում է նոցա ցախաւել, որպէսզի կոտրին, բայց ո՛չ մէկ չէ կարողանում կոտրել ցախաւելը։ Այնուհետեւ հայրը հրամայում է որդւոց, որ քանդին այդ ցախաւելը եւ նորա ծաղիկները առանձին առանձին կոտրին. որդիքը ծիծաղում են եւ ծաղրելով մէկ մէկ կոտրում. հայրն ասում է՝ «տեսնո՞ւմ էք. որդիք, եթէ այդ ցախաւելի նման միշտ համախմբուած լինէք, ձեզ ոչինչ չէ կարող թշնամին անել. իսկ եթէ բաժան լինէք եւ շարունակ կռուէք ձեզ ամէն կերպ կտրող է թշնամին վնասել։

Կռիւը երկար է տեւում, համարեա՝ մութն է, որ վերջին դռոհ են տալիս հայ քաջերը գոռալով՝ «Ղե՛րք. հետեւից, թշնամին փախաւ, կեցցէ՛ հայ ժողովրդի բարօրութեան համար չի աշխատում։

22 օգոստ. 1906 Ցոլակ

Թաւրիզ

«Երիտասարդ Հայաստան»

ՇՈՒՄԼԱՑԻՆԵ՛Ր

Ձեր թաղական աղաներուն քըմահաճոյքը այնպէս որոշեց որ ձեր դպրոցը այսօրուընէ սկսեալ գոցուի...։

Ձեր հարիւրաւոր ուսուցանատենչ զաւակները, անիծելով զիրենք կրթութենէ զրկող մարդիկը, պիտի թափառին փողոցներուն մէջ։

Մեր պարտքն է ձեզ զգացնել թէ ժամանակ է արթննալու, ըմբոստանալու եւ բացատրութիւն պահանջելու թաղական աղաներէն։

Միայն Շումլայի մէջ է որ այսպիսի անվայել և խայտառակ գործեր տեղի կունենան և միայն հոս է որ ամբողջ համայնքի մը քթին կը խնդան 2—3 մարդեր։

Արթնցէ՛ք, Շումլացինե՛ր, Արթնցէ՛ք։

Ուսուցչական Մարմին

Ս. Վարդանեան վարժարանի

Շումլա 18 հոկ. 1906

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Անցեալ կիւրակէ հոկտ. 15ին, որբախնամ ընկերութիւնս բացի գործ. ժողովէն 2—3 անդամոց ներկայութեամբ յարմար չը գտուեցաւ ժողովը օրինաւոր սեպելու, որոշուեցաւ յետաձգել յառաջիկայ կիւրակէ 22 հոկտ. կէս օրէն վերջ ժամ 2ին աղգ. վարժարանի մէջ կրկին ընդհ. ժողով գումարել։

Ուստի ընկերութեանս անդամներ կը հրաւիրուին ներկայ գտնուիլ. ներկաները մեծամասնու-

---

 են նոքա սիրտս թնդում է և ես կանգնում եմ ոտերիս մատների վրայ, աւելի հեռուն տեսնելու, գալիս են քաջեր. ծայրը տեսնում եմ, բայց վերջը չկայ և ինչպէս զինուած. արշալոյսի ճառագայթների տակ ինչպէ՛ս են փայլում-փալփլում նոցա դէնքերը. նոքա մօտենում են և ես պարզ տեսնում եմ առաջին ձիաւորի ձեռքին կարմիր դրօշակը եւ նոյն իսկ կարդում եմ նորա մակագրութիւնը՝ «վրէ՛ժ կամ մա՛հ, Դաշնակցական կուսակցութիւն»։

Իսկ այն ի՞նչ է, ինչպիսի՛ փշի. ահա հեռուից, հակառակ կողմից, դարձեալ ձիաւոր դարձեալ զէնքեր, եւ ինչպէս արագ են արշաւում. նոքա էլ մօտենում են բարձունքներից, նոյն կարմիր դրօշը. նոյն նշանաբանը. բայց նշանաբանի տակը գրուած է «Հնչակեան կուսակցութիւն»։ Օ՛, որքան շատ են քաջերի թիւը եւ ինչպէս զինուած։

Գալիս են բոլորն էլ գրաւում իրենց դիրքերը. երկու կուսակցութեան խմբապետները մօտենում են միմեանց սիրոյ ողջոյններ տալիս եւ համբուրում են, երկու կողմից զինուորները աղաղակում են՝ «կեցցէ՛ միութիւն»։ Ես հրացած նայում եմ նոցա, կպել իմ ժայռին եւ լաւ դիտում նոցա ամեն մի շարժում։

«Ղե՛րք, դիրքերդ», գոռացին խմբապետները եւ չտապեցին իրենց տեղը. ես չուարած դիտեցի շուրջս. մի՞թէ՞ թշնամին դարան էր մտել. ո՛չ այդ տաճկական քայլերգի ձայնն էր որ սթափեցրեց մեր խմբապետներին եւ չտապեցին իրենց տեղերը։ Գալիս է զօրքը խուժանի հետ եւ չրջապատում են հերոսներին։

— «Կրա՜կ», գոռում են խմբապետները եւ միահամուռ թնդիւնը հրացանների ղղրդացնում է ձորեր, քարայրներ. ես սարսափիցս կպչում եմ ժայռին. սկսում է զարհուրելի կռիւ. Դաշնակ եւ Հնչակ ձեռք ձեռքի տուած կռուում են յուսահատ զարկերի ընդմիջումների միջից լսում եմ խմբապետների ոգեւորեցուցիչ բառերը՝ «Ձախ կողմից կրա՜կ, տղերք, աջ կողմն առա՜ջ». եւ ձախ կողմը կրակ է թափում, աջ կողմն առաջ է ընթանում։

Ես զմայլում եմ, ես յափշտակւում եմ, որքա՜ն լաւ բան է «միաբանութիւն», ես յիշում եմ ցախաւելի պատմութիւնը, երբ հայրը մահուան անկողնում կանչում է իւր որդիներին եւ առաջարկում է նոցա ցախաւել, որպէսզի կոտրին, բայց ո՛չ մէկ չէ կարողանում կոտրել ցախաւելը։ Այնուհետեւ հայրը հրամայում է որդւոց, որ քանդին այդ ցախաւելը եւ նորա ծաղիկները առանձին առանձին կոտրին. որդիքը ծիծաղում են եւ ծաղրելով մէկ մէկ կոտրում. հայրն ասում է՝ «տեսնո՞ւմ էք. որդիք, եթէ այդ ցախաւելի նման միշտ համախմբուած լինէք, ձեզ ոչինչ չէ կարող թշնամին անել. իսկ եթէ բաժան լինէք եւ շարունակ կռուէք ձեզ ամէն կերպ կտրող է թշնամին վնասել։

Կռիւը երկար է տեւում, համարեա՝ մութն է, որ վերջին դռոհ են տալիս հայ քաջերը գոռալով՝ «Ղե՛րք. հետեւից, թշնամին փախաւ, կեցցէ՛ ազատութիւն». այդ ձայներից խրտխուսուած պակուում եմ ժայռից, կանգնում եմ նորա վրայ եւ, ուրախութեան արցունքներ աչքերիս, ես էլ գոռում եմ՝ «կեցցէ ազատ...», ես չեմ կարողանում հնչել այդ վերջին տենչալի բառը, մի գնդակ սուր վրդզոցով գալիս է խրւում կրծքիս մէջ. զգացի մի սուր ծակոց միայն, իսկոյն կպչում իմ ժայռին. բայց ամբողջ մարմինս տերեւի նման ցնցւում է. ձեռքերս թուլանում են եւ ձեռքերիցս դուրս է պրծնում ժայռը ու շեշտակի ձորն եմ ընկնում։

Սարսափահար բացում եմ աչքերս եւ գտնում եմ ինձ մահճակալիս մօտ յատակի վրայ փռուած։

ՈՒՍ. Գ. ՆԱՀԱՐ.

18 Հոկտ. 1906 թ.

Փարիզ

թիւն պիտի կազմեն, իսկ բացակայ անդամները վերջէն բողոքելու և դիտողութիւն ընելու իրաւունքը չը պիտի ունենան։ Հակառակ պարագային, եթէ ներկայ անդամներով կրկին կարելի չեղաւ ժողովը օրինաւոր սեպելու, գործ. ժողովս պէտք եղած որոշումները պիտի տայ վերջնականապէս։

Մնամք յարգանօք

Ի դիմաց Գործ. ժողովոյ

Ատենագրիր Ատենապետ

Ա. Ջարպհանէլեան Ց. Կ. Ճանկիլեան

Վառնա 19 հոյտ. 1906

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Ամերիկացի նաւապետ Պուրշմէն որ թուրք պաշտօնէութեան մէջ է, մեկնած է Դիլ. նա «կէրմանիա» անուն նաւարանին մէջ, վերանորոգուած «Ասարի թէֆիք» զրահանաւը ընդունելու և Պոլիս բերելու։ Մովակալութիւնը բուռն գործունէութեան մէջ է. և արդէն սկսած է քանի մը շոգենաւերու վերանորոգումը, մեծ սուլտանաւերու քանակը աւելցնելու ճիգեր կը թափուին։ Քիչ ժամանակէն քանի մը սուլտանաւերը պիտի յանձնարարուին եւրոպական այլևայլ նաւարաններու։

— Էրզրումէն հասած վերջին լուրերը ի յայտ կը բերեն թէ՝ հոն ծագած զինուորական ըմբոստացումը կարծուածէն շատ աւելի լուրջ եղած է։

Վալին ծանրապէս վիրաւորուած է, անոր կեանքը վտանգի մէջ է. բոլոր պաշտօնեաները փախեր և Էրզինկեան ապաստաներ են։ Կարգը վերահաստատելու համար կանչուած զօրքը, ստիպուեր է ապստամբներու հետ կատարեալ կռիւ մղել։ Քոան հոգի սպաննուած և շատ մը վիրաւորներ կան։ Բան մը չգիտցուիր թէ ինչ եղած է բնակչութիւնը։ Շատ վախ կայ թէ քաղաքին քանի մը թաղերուն մէջ հայերը ջնջուած ըլլան։

ՌՈՒՍԻԱ

«Օգո» լրագիրը տեսութիւն մը ընելով ռուսական գործերու վերայ 17 հոկտեմբեր 1906. ռուսական սահմանադրութեան տարեդարձը, հետեւեալ համարտութիւնը կը ներկայացնէ.

Այս ժամանակամիջոցին մէջ եղած՝

1) Ըմբոստացումներու, ջարդերու և ընդհարումներու զոհ գացած են 22721 հոգի և 1513 հոգի ալ դատավարութեամբ սպաննուած են։

2) Դատապարտուածներու քանակը 7138 հոգիի կը յանգի, որոնցմէ 851 հոգի դատապարտուած է տաժանակիր աշխատութեան։

3) 522 լրագիր դադարած և 647 խմբագիր դատի տրուած են։

4) 31 նահանգներու մէջ զինուորական դրութիւն յայտարարուած է, իսկ 41 նահանգներու մէջ մասնակի։

— Օտէսայէն կը հեռագրեն թէ Կովկասի դրութիւնը շատ վտանգաւոր է։ Այն ամէն անձինք որ լաւ կը ճանչնան Կովկասը կը հաւատան թէ հոն սարսռազդեցիկ անցքեր կը պատրաստուին, Կովկասը քիչ ժամանակէն արեան մէջ խեղդուելու է։

— Էքսթէրինոսլավի ոստիկանապետը Միխէլս սպաննուած է։ Սպաննիչը ձերբակալուած և զինուորական դատարանի կողմանէ մահուան դատապարտուած է։ Սպաննումէն երկու ժամ վերջը գլխատած են սպաննիչը։

— Ամսոյս 14ին—առաւօտեան ժամը 11 ին, Էքսթէրինոգիա ըրանցքին և Ֆոնարնաեա փողոցի անկիւնը, 20 հոգի կը յարձակին կառքի մը վրայ որ մաքսատունէ գանձատունը 600000 ռուպլի կը փոխադրէր, դրամները զետեղուած էին պայուսակներու մէջ։ Յարձակողներէն մին ռումբ մը կը նետէ ձիերուն վրայ, որոնցմէ մին անմիջապէս կը սատկի իսկ միւսը կը վիրաւորուի, ասկէ ետքը ռումբ մ'ալ կառքին վրայ կը նետեն, կառապանը և անոր օգնականները կառքէն վար կիյնան, իսկ այս պահուս յարձակողները պահակին հեա կռուելով կառքին կը մօտենան և 3 պայուսակ կը յաջողին յափշտակել։ Յափշտակուած դրամները կնոջ մը կը յանձնեն, որ ֆայթոնի մը մէջ կը տեղաւորէ։ Ճամբուն վրայ պայուսակներէն մին կիյնայ։ Այս ժամանակամիջոցիս յարձակողները այլ և այլ ուղղութեամբ կը ցրուին։ Յարձակողներէն մին փախած ժամանակ ռումբ մը կը ձգէ, որ կը վիրաւորէ ձգողը. դռնապան մը և կին մը. հրոսակը անմիջապէս կը ձերբակալուի։ Երեք դռնապաններ Օֆիցերսգաեա փողոցին մէջ կը յաջողին յարձակողներէն չորսը ձերբակալել, սակայն ճիշտ այս պահուս, 50 հոգիէ կազմուած հրոսակախումբ մը երեւան կուգայ. չգիտցուիր թէ ուստի. և դռնապաններու ձեռքէն կազատէ ձերբակալուածները։ Կան վիրաւորեալներ։ Մոսքայա փողոցէն ոչ հեռու, կապոյտ կամուրջին վրայ, յարձակողներէն մին անձնասպան կըլլայ, մնացածները սպաննուած կամ ձերբակալուած են քաղաքի այլ և այլ թաղերու մէջ։ Յափշտակուած դրամը 368000 ռուպլիի է։

Հաստատուած է թէ հրոսակախումբը իրեն համար ժամատեղի ընտրած էր գարեջրատուն մը. որ կը գտնուի Էքսթէրինդիա ըրանցքին և Ֆոնարնայա փողոցին անկիւնը։

— Օտէսայէն կը հեռագրեն. նորակոչ զինուորներու գումարուելն պատճառով. կառավարիչը խիստ միջոցներ ձեռք կառնէ։ Բոլոր նորակոչ զինուորները պիտի կալանաւորուին մինչեւ որ զօրանոցները ուղարկուին։ Ա. նոնք որ կը մերժեն զինուորագրուիլ. զինուորական դատարաններու առջեւ պիտի դատուին ու դատապարտուին։

— Ուսանողները ժողով մը գումարեր են, այս ժողովին 4000 ուսանողներ մասնակցեր են։ Ժողովը յեղափոխական որոշում առած է այն իմաստով որ կռիւը մինչեւ վերջ շարունակեն։

Ոստիկանութիւնը պէտք եղած չափերը ձեռք կառնէ։

— Ոստիկանութիւնը չը տեսնուած պատահարի մը համար պատրաստութիւններ կը տեսնէ։ Զինուորական և քաղաքական իշխանութիւնները յուզեալ վիճակի մը մէջ են։ Բեթերսպուրկի մէջ շատ վրդովիչ լուրեր կը շրջին։ Գունդ մը հետեւազօր և երեք գունդ գոզաքներ եկած են ամրապնդել պահակազօրը։ Թրնդանօթաձիգները նոր հրանիթեայ մթերք ընդունած են։ Կառավարական հաստատութիւնները զինուորներով պաշարուած է։ Բոլոր գաղտնի ոստիկանութեան պաշտօնէութիւնը ոտքի վրայ է։

Արգիլուած է ժողովրդեան խմբակներ կազմել, այս իմաստով յայտարարութիւններ փակցուած են փողոցներու մէջ։

— Գազանի համալսարանին վերատեսուչը շատ մը սպառնական նամակներ ստացեր է։ Այս նամակներու հեղինակները կը սպառնան համալսարանի շէնքը օդը հանել եթէ ուսանողներուն չ'արգիլուի հոն ժողովներ գումարել. ուսուցչական մարմինը որ շեր է այս մասին լուսաւորութեան նախարարին հետ խորհրդակցիլ, և անոր պաշտպանութիւնը պահանջել յետագիմական տարրին դէմ, որ սպառնական նամակներու հեղինակն է։

— «Օգո» լրագրի գրածին համաձայն, Իւսիոյ բանտերուն մէջ 300000 բանտարկեալներ կան այժմ. որ կառավարութեան 15 հազար ռուպլիի ծախս մը բացած է օրական։

— Օտէսայէն քաշուած հեռագրի մը համաձայն, այս քաղաքին մէջ գտնուած հրեաները ախ ու դողի մէջ են, ընդհանուր կառավարիչը խիստ միջոցներ ձեռք առած է. խուլիկաններու մտադրածին առաջքը առնելու համար։ Այսու հանդերձ ձեռք առնուած միջոցները բաւականաչափ չեն խուլիկանները արգիլելու համար, որովհետեւ ոստիկանութիւնը անոնց ոյժ կուտայ։

— Գիէվէն կը հեռագրեն թէ շատ մը գիւղերու մէջ գիւղացիներու շարժումը սպառնալից կերպարանք կառնէ։ Քանի մը գիւղերու մէջ, գիւղացիները անօթութենէ հարկադրուած՝ շատ մը ազնուականներու ագարակները աւարի են տուեր։ եթէ կառավարութիւնը իր նպաստներով օգնութեան չը հասնի, կացութիւնը շատ վտանգաւոր է։

Ոտացանք

«Ռահվիրայ» ամսաթերթը

Օրկանն է Պուլկարիոյ հայ ուսուցչական Միութեան։

Հասցէն է

Ռէտակսիոն տը լա ռըվիւ «Ռահվիրայ» Շումլա (Պուլկարի)

ՄՈՒՐԱՏԻ եւ ԺԻՐԱՅՐԻ Միացեալ Պատկերը

Նուիրուած

Անմահ Ժիրայրի յիշատակին

Ամերիկայի Հնչակեան մասնաճիւղերու գործադիր յանձնախումբը, պատրաստած է նահատակ եւ կենդանի հերոս եղբայրներու, անմահ Ժիրայրի եւ քաջ Մուրատի մեծադիր և չքեղ պատկերը։ Պատկերի վերեւը գրուած է հայկական նշանակները, ուր կը տեսուին Արարատ լեռը. Նոեան տապանը եւ Մայր Հայաստանը։ Հայկական դրօշակներու ծալքերէն կախուած են Մուրատին եւ Ժիրայրին նուիրուած ոտանաւորներ, Հընչակեան Զինանշան, որուն երկու կողմը գրուած են երկու գանգակներ Այ կողմը Մուրատի Սասուն գնալու ժամանակուայ պատկերը, ձախ կողմը Ժիրայրի եւ անոնց ներքեւ քաջ Մուրատի այժմեան պատկերները։ Ոչ մէկ ջանք խնայուած չէ պատկերը գեղեցիկ ընելու։ Գինն է 50 սենթ կանխիկ

Ստանալ ցանկացողները դիմելու են Ամերիկայի Հնչակեան մասնաճիւղերու գործադիր Յանձնախմբին հետեւեալ հասցէով՝

Մ. ԼԱՄՊԷՐԹ, 199 Բ. Օ. Պօքս.

Մ. Ս. Նիւեորք-սիդի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Նկարիչ Ֆէթֆաճեանի Անի աւերակների գունաւոր եւ գեղեցիկ ալբոմները եւ փոստ քարտերը մեծ քանակութեամբ ծախվում են Վիէննայում պ. Գ. Ամատունու մօտ։

Ալբոմի գինը, փոստի ծախքով, 3 քրոն է, իսկ փոստ կարտերի հատը փոստի ծախքով 20 հելլէր։

Պէտք է դիմել հետեւեալ հասցէին Գ. Ամատունի

Ցիրկուս Կաս թիւ 3 դիր 32 ՎԻԷՆՆԱ

Печатница на П. Глушковъ С. Вар